Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն # 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 15 սեպտեմբերի 2018թ.

Նիստը նախագահում էր՝

Վալերիյ Օսիպյան	ՀՀ ոստիկանության պետ, ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի նախագահ

Քարտուղար՝

Արգինե Հովհաննիսյան	ՀՀ ոստիկանության ՀԿԼ վարչության ՀԿՀ ավագ տեսուչ

Նիստին մասնակցում էին՝

1. Արտաշես Ավոյան	ՀՀ ոստիկանության պետի խորհրդական, ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի նախագահի տեղակալ
2. Դավիթ Պեղանյան	«Վարորդի ընկեր» Հ/Կ
3. Բաբկեն Սեդրակյան	«Պատվավոր հյուպատոսների միություն» Հ/Կ
4. Ավետիս Ավետիսյան	«Հատուկ գնդի վետերաններ» Հ/Կ
5. Գևորգ Տեր-Գևորգյան	«Ազատամարտիկների դաշինք» Հ/Կ
6. Ռաֆայել Աֆրիկյան	«Իրազեկ քաղաքացիների միավորում» Հ/Կ
7. Լիլիթ Չիբուխչյան	«Զոհված ոստիկանների ընտանիքների աջակցություն» Հ/Կ
8. Երվանդ Պետրոսյան	«Հասարակական անվտանգության միջազգային ոստիկանական կորպորացիա» Հ/Կ
9. Սուսաննա Վարդանյան	«Կանանց իրավունքների կենտրոն» Հ/Կ
10. Միքայել Արամյան	«Ընդդեմ իրավական կամայականության» Հ/Կ
11. Հարություն Համբարձումյան	«Ընտրությունը Քոնն է» Հ/Կ
12. Իզաբելլա Սարգսյան	«Եվրասիա Համագործակցություն» հիմնադրամ

13. Արթուր Սուքիասյան «Իրավաբանների հայկական ասոցիացիա» Հ/Կ
14. Սիաբանդ Բաքոյան «Եզդի և Հայ ժողովուրդների բարեկամություն» Հ/Կ
15. Ժաննա Ալեքսանյան «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» Հ/Կ
16. Սնակ Գրիգորյան
17. Իշխան Խաչատրյան
18. Անահիտ Հերգնյան
19. Հայկ Գաբրիելյան
20. Վահան Հարությունյան
21. Արմեն Պետրոսյան
22. Արմեն Մկրտչյան
23. Գեղամ Հարությունյան
24. Արտավազդ Սարգսյան
25. Դավիթ Խոսրովյան
26. Աշոտ Հակոբյան
27. Վլադիսլավ Ֆարամազյան
28. Սարո Սարոյան
29. Ֆելիքս Հայրապետյան
30. Սերգեյ Ղահրամանյան
31. Արման Մնացականյան
32. Հայկազ Ավետիսյան
33. Տիգրան Պետրոսյան
34. Արամ Մանուկյան
35. Փայլակ Ֆահրադյան
36. Սահակ Սալնազարյան
37. Կորյուն Ավանյան

Հարգելի բացակա՝

1. Մարի Մաթոսյան «Կանանց աջակցման կենտրոն» Հ/Կ
2. Ավետիք Իշխանյան «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» Հ/Կ
3. Լևոն Ղազարյան
4. Արկադյա Գևորգյան
5. Արսեն Հայրիյան
6. Արա Կարապետյան
7. Ադրինե Թորոսյան

Օրակարգ՝

1. Երևան քաղաքի ավագանու՝ 23.09.2018թ. նախատեսվող արտահերթ ընտրություններին ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի ներգրավվածության մասին:

/Հ/Խ նախագահ՝ Վ. Օսիպյան/

2. «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Ռ. Աֆրիկյանի հաղորդումը «Անվտանգ սեպտեմբեր՝ ապահով ուսումնառություն» միջոցառման արդյունքների մասին:

/Զեկուցող՝ Հ/Խ անդամ Ռ. Աֆրիկյան/

Մինչ օրակարգի հարցերին անդրադառնալը՝ Վ. Օսիպյանը ողջունեց հասարակական խորհրդի անդամներին՝ իր գոհունակությունն արտահայտելով առ այն, որ Խորհրդի առաջին նիստից հետո արդեն իսկ կատարվել է տեսանելի աշխատանք և արձանագրեց արդյունքները: Առանձին շնորհակալություն հայտնեց Խորհրդի անդամներ Դավիթ Պեղանյանին, Սերգեյ Ղահրամանյանին, Ռաֆայել Աֆրիկյանին, Երվանդ Պետրոսյանին և նրանց աջակցություն ցուցաբերած Խորհրդի մեր մյուս գործընկերներին ու այն կամավորներին, ում նախաձեռնողական ջանքերի շնորհիվ հաջողությամբ իրականացվեց «Անվտանգ սեպտեմբեր՝ ապահով ուսումնառություն» Խորհրդի նախագծած միջոցառումը:

Անդրադառնալով Խորհրդի որոշ անդամների դրսևորած պատրաստակամությանը՝ մասնակցելու Ոստիկանությունում իրականացվող քաղաքացիների ընդունելությանը՝ Վ. Օսիպյանն ընդգծեց, որ խիստ կարևորում է հասարակական սեկտորի ներկայությունը քաղաքացիների ընդունելություններին և որ դա բազմակողմանի օգտակար կարող է լինել ոստիկանություն դիմող քաղաքացիների համար:

Երևան քաղաքի ավագանու՝ 23.09.2018թ. նախատեսվող արտահերթ ընտրություններին ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի ներգրավվածության մասին:

Լսեցին՝ ՀՀ ոստիկանության պետ Վ. Օսիպյանի հաղորդումը Երևան քաղաքի ավագանու՝ 23.09.2018թ. նախատեսվող արտահերթ ընտրություններին ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի ներգրավվածության մասին:

Վ. Օսիպյանը նշեց, որ ընտրությունները պետք է լինեն բացառիկ՝ թափանցիկության, արդարության և օրինականության առումով, ու ավանդական դարձած ընտրակեղծարարների խմբերն այդ ընտրություններում որևէ անելիք չպետք է ունենան: Բանախոսն արձանագրեց, որ սա առաջին ընտրությունն է, որ տեղի է ունենալու նոր Հայաստանում, և այդ իմաստով, այն պետք է դառնա նախադեպը չունեցող:

Վ. Օսիպյանն անդրադարձավ ընտրություններին ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի ներգրավվածությանը՝ նշելով, որ Խորհրդի կազմում ընդգրկված 18 հասարակական, այդ թվում իրավապաշտպան գործունեություն իրականացնող կազմակերպություններից 5-ը՝ «Ընդդեմ իրավական կամայականության», «Հայաստանի Հելսինկյան կոմիտե», «Ընտրությունը քոնն է», «Իրազեկ քաղաքացիների միավորում» և «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» կազմակերպությունները հավատարմագրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովում՝ որպես առաջիկա ընտրություններում դիտորդական առաքելություն իրականացնող տեղական կազմակերպություններ: Այս 5 կազմակերպությունները միասին վերցրած դիտորդական առաքելություն են իրականացնելու իրենց 398, շուրջ 400 դիտորդներով՝ այն դեպքում, երբ տեղամասային ընտրական կենտրոնների թիվը Երևանում 475-ն է: Նա նշեց, որ բոլոր 475 ընրական տեղամասերում Ոստիկանությունն, իհարկե, ունենալու է իր վերակարգերը, որոնք օրենքով սահմանված կարգով իրականացնելու են իրենց վերապահված լիազորությունները, սակայն մեծ է լինելու Հասարակական խորհրդի ներգրավվածությունն ու դերակատարումը ընտրական գործընթացում: Վ. Օսիպյանն իր խոսքում նշեց, որ Խորհրդի անդամներից ակնկալվում է ընտրական իրավունքի ազատ իրականացման յուրաքանչյուր ենթադրյալ խախտման վերաբերյալ ահազանգել Ոստիկանություն: Հավելեց, որ իրեն են դիմել Խորհրդի մի խումբ

անդամներ՝ ընտրության օրը՝ քվեարկության և դրա արդյունքների ամփոփման ամբողջ ժամանակահատվածում, Խորհրդի շահագրգիռ անդամներով ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատում հերթափոխով հերթապահություն իրականացնելու համար, ինչը ողջունվել է իր կողմից, ավելին Խորհրդի տեղակալ Արտաշես Ավոյանի համակարգմամբ Խորհրդի հերթապահ խումբը կսպասարկի հատուկ այդ նպատակով բացված թեժ գիծը: Հասարակական խորհրդի մանդատին և լիազորություններին համապատասխան, ուշադրության կենտրոնում կլինեն բոլոր այն ահազանգերը, որոնք բացառապես կվերաբերեն ոստիկանության ծառայողներին՝ ինչպես տեղամասային ընտրական կենտրոններում հերթապահություն իրականացնող ոստիկանության ծառայողների կողմից անօրինական գործողությունների կամ անգործության, ոստիկանի կերպարին անհարիր վարքագծի դրսևորման դեպքերին, այնպես էլ ոստիկանի նկատմանբ հակաիրավական գործողությունների և ընդգծված անհարգալից վերաբերմունքի դեպքերին: Անհրաժեշտության դեպքում, ըստ ստացված ահազանգի կարևորության և հրատապության աստիճանի, Հասարակական խորհրդի հերթապահող խմբի ներկայացուցիչները օպերատիվ կերպով կարձագանքեն դեպքերին, ընդհուպ մինչև՝ կգտնվեն տեղերում և կպարզեն կատարվածի հանգամանքները:

Խորհրդի անդամների կողմից հնչեցին հարցեր՝ կապված ընտրություններին ոստիկանների պատրաստվածության, նախատեսված դասընթացների ու հրահանգավորումների մասին, ընտրացուցակների ճշգրտության, քվեարկության օրը և դրանից առաջ հնարավոր ապօրինությունները բացառելու, ընտրակաշառքի տեսակների, թաղային հեղինակությունների հետ պրոֆիլակտիկ զրույցներ տանելու և այլնի մասին, որոնց տրվեցին պարզաբանումներ:

Որոշեցին՝ ՀՀ ոստիկանության պետ Վ. Օսիպյանի հաղորդումը՝ Երևան քաղաքի ավագանու 23.09.2018թ. նախատեսվող արտահերթ ընտրություններին ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի ներգրավվածության մասին ընդունել ի գիտություն:

<u>«Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Ռ. Աֆրիկյանի հաղորդումը «Անվտանգ սեպտեմբեր՝ ապահով ուսումնառություն» միջոցառման արդյունքների մասին:</u>

Լսեցին ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի անդամ Ռաֆայել Աֆրիկյանի զեկույցը՝ «Անվտանգ սեպտեմբեր՝ ապահով ուսումնառություն» միջոցառման արդյունքների մասին:

Ռ. Աֆրիկյանն իր ելույթում անդրադարձավ միջոցառման նպատակին և ներկայացրեց որոշ փաստեր ու թվեր: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի 5 անդամ և 9 կամավոր: Միջոցառման ընթացքում այցելել են շուրջ 20 դպրոց, օգնել են կարգավորել հետիոտնի անվտանգ տեղաշարժը, զրուցել են ոստիկանների հետ՝ ծառայության ընթացքում առկա խնդիրների և դրանց լուծումների վերաբերյալ, զրուցել են աշակերտների ծնողների և մանկավարժների հետ: Այդ ընթացքում ճանապարհային երթևեկության անվտանգության կանոններ են սովորեցրել 2-5-րդ դասարանի ավելի քան 6000 աշակերտի:

Ռ. Աֆրիկյանն իր խոսքում նշեց, որ միջոցառման ընթացքում արձանագրել են նաև ոստիկանության ծառայողների որոշ թերացումներ ու բացթողումներ, որոնք համակարգային լուծում ստանալու կարիք ունեն:

Վերլուծելով միջոցառման ընքացքում ձեռք բերված տվյալներն ու հետազոտելով դրանք, ամփոփելով արդյունքները՝ Ռաֆայել Աֆրիկյանը շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին և կամավորներին, ովքեր փորձ արեցին մարմնավորել ոստիկանի կերպարը և հասկանալ գործի բարդությունը: Շնորհակալություն հայտնեց նաև ծառայությունը բարեխիղճ իրականացնող համակարգի բոլոր ոստիկաններին և բոլոր նրանց, ովքեր գիտակցաբար և ըմբռնումով են մոտենում ու հարգում անվտանգության միջոցառումները, ինչու չէ, փորձում են օգտակար լինել:

Հարցի շուրջ Խորհրդի անդամները ներկայացրին իրենց մոտեցումները և առաջարկությունները:

Միջոցառման վերաբերյալ ներկայացված զեկույցը Խորհրդի կողմից ընդունվեց ի գիտություն:

Նիստին քննարկվեցին նաև մի շարք կազմակերպչական հարցեր, ճշտվեցին խորհրդի հետագա անելիքներն ու ըստ մասնագիտական ուղղությունների հանձնաժողովների աշխատանքը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ Վ. ՕՍԻՊՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ